պէս, Վարդանի ներկայութիւնը Հռոմկլայում, որ հինգ տարի տեւեց՝ 1241–1245: Նա «աղօթականութեան աղաղաւ երթեալ էր յԵրուսաղէմ» ըստ Կիրակոսի, ապա հանդիպում է Հեթում թագաւորին եւ նորա եղբայրներին, եւ այն տեղից «չոգաւ եւ առ սուրբ կաթուղիկոսն, զոր տեսեալ, ուրախացաւ յոյժ, եւ առ իւր պահէր յոլով ժամանակս, սիրով կապեալ ընդ նմա. եւ զի ոչ կամէր երբէք մեկնիլ ի նմանէ»: Նորա ներկայութեան եւ բարեկամութեան արդիւնքն էր Սսոյ ժողովը 1243 թուին, նպատակ ունենալով բարեկարգել նկատուած թերութիւնները եկեղեցական կեանքի մէջ: Ժողովին ներկայ չէին արեւելեան Հայաստանի վարդապետները, ուստի շրջաբերական թղթով Վարդանին նշանակում է որպէս իւր ներկայացուցիչ, նորա հետ դնելով եւ ուրիշներ, որպէս զի նախ շրջեն եպիսկոպոսական վիճակներն ու վանքերը եւ նրանց հաւանութիւնն ու ստորագրութիւնն առնելով, բերեն իրեն:*

Մեր նիւթից դուրս է զբաղուել այդ կանոնների վերլուծութեամբ, բայց նրանցից երկուսը՝ Ժ. եւ ԺԱ. անմիջապէս կապուած են նորա հետ: Ահա այդ կանոնները՝

«Գրոց դասասացք բազմաց վկայութեամբ լիցի, որ լինին գիտունք եւ ամենայն գրոց վարժք եւ տեղեակք եւ փորձ ամենայնիւ, նոյնպէս եւ գրոց աշակերտքն ընտրութեամբ նորին եւ առաւել փորձիւ, եւ վկայութեամբ կատարելոց:»

«Եւ հրամայէ եպիսկոպոսն զսուրբ գիրս եկեղեցւոյ գրել արուեստաւորաց, եւ գիտնոց եւ վկայութեամբ կատարելոց:»

Պատկ. 7.— Ձեռ. Աւետ. Երուս. No. 2660/105, Լեւոն Գ. Թագաժառանգ եւ Կինը Կեռան, 1262 թ.

*Գանձակեցի. 162–174: